

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2019Թ.

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,


Կիբեռանվտանգության ոլորտի միջազգային առաջատար «Կասպերսկի» ընկերությունը Հայաստանի Հանրապետության ուժային կառույցների տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական անվտանգության մասնագետների համար կազմակերպում է **տեղեկատվական անվտանգության թեմայով սեմինար**, որը կկայանա **հոկտեմբերի 4-ին, ժամը 10:00-13:00-ը, «Radisson Blu Hotel Yerevan» հյուրանոցում (հասցե՝ Երևան, Ազատության պող 2/2):** Սեմինարի օրակարգը և հրավիրատուները կցված են:

Իր տեսակի մեջ բացառիկ և տեղեկատվական անվտանգության համաշխարհային մակարդակով առանցքային խնդիրների լուծումներին վերաբերող սեմինարը կվարեն «Կասպերսկի»-ի առաջատար փորձագետները՝ ներկայացնելով պետական, ուժային կառույցների, նաև կրիտիկական ենթակառուցվածքների տեղեկատվական անվտանգության ոլորտի արդիական սպառնալիքները, դրանց կանխարգելման ու չեզոքացման ժամանակակից ու արդյունավետ լուծումները և գործիքները:

Հաշվի առնելով սեմինարին ներկայացվելիք թեմաների հույժ կարևորությունը Ձեր կառույցի համակարգի գործառնությունների և խնդիրների իրագործման ընթացքում տեղեկատվական անվտանգության ապահովման համար՝ խնդրում եմ նպաստել Ձեր կառույցի համակարգի տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական անվտանգության ոլորտի մասնագետների առավելագույն մասնակցությանը կիբեռանվտանգության թեմայով վերոնշյալ սեմինարին:


Տեղեկացնում եմ, որ սեմինարի մասնակիցների թվաքանակն անսահմանափակ է, և առաջարկում սեմինարին մասնակցության համաձայնության, Ձեր ղեկավարած կազմակերպությունից մասնակիցների մասին հնարավորինս սեղմ ժամկետներում տեղեկացնել (+374 10) 58 26 20 հեռախոսահամարով և/կամ kasperskyevent@globalspc.am Էլեկտրոնային փոստով՝ ներկայացնելով մասնագետների ազգանուն, անունը, կազմակերպության անվանումը, մասնագետների պաշտոնը, բջջային հեռախոսահամարը և Էլեկտրոնային փոստի հասցեն:

Արմեն Կարապետյան



Հայաստանում և Վրաստանում տարածքային ներկայացուցիչ

«Կասպերսկի Լաբորատորիա» ընկերություն



kaspersky

ՍԵՄԻՆԱՐ

ՀՀ ՌԻԺԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երևան, հոկտեմբերի 4, 2019
«Radisson Blu Hotel Yerevan» հյուրանոց
Հասցե՝ Երևան, Ազատության պող 2/2

ՕՐԱԿԱՐԳ

9:30 – 10:00	Բարի գալուստ, սուրճ
10:00 – 10:05	«Բարի գալուստ» – Արմեն Կարապետյան, Հայաստանում և Վրաստանում տարածքային ներկայացուցիչ, «Կասպերսկի Լաբորատորիա»
10:05 - 11:05	«Արդյունավետ հակազդեցությունն ժամանակակից գրոհներին: «Կասպերսկի»-ի լուծումները» – Վալերի Չուբանով, Կենտրոնական Ասիայում և Մոնղոլիայում տարածաշրջանային գրասենյակի կոմերցիոն տնօրեն, «Կասպերսկի» ընկերություն
11:05 - 12:05	«Ժամանակակից թիրախային գրոհների եղանակները և դրանցից պաշտպանության գործիքակազմը» – Եվգենի Պիտոլին, Ղազախստանում, Կենտրոնական Ասիայում և Մոնղոլիայում կառավարման տնօրեն, «Կասպերսկի» ընկերություն
12:05 – 12:45	Հյուրասիրություն



Եվգենի
Պիտոլին



Վալերի
Չուբանով



Արմեն
Կարապետյան